**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ**
**25 օգոստոսի, 2020 N 59**

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ ***ո ր ո շ ու մ  ե մ.***

1. Արցախի Հանրապետության Պարետի 2020 թվականի ապրիլի 13-ի «Արցախի Հանրապետություն մուտք գործելու առանձնահատուկ և անհետաձգելի համարվող դեպքերը սահմանելու, Արցախի Հանրապետություն մուտք գործելիս և Արցախի Հանրապետության վարչական սահմաններում կիրառվող սահմանափակումների մասին» N 1 որոշման՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված անձինք (բացառությամբ մինչև վեց տարեկան երեխաների) Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս անցակետում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ երեք օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (այսուհետ՝ ՊՇՌ) թեստի պատասխանը: Թեստի պատասխանն անցակետում չներկայացվելու դեպքում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցները ՊՇՌ հետազոտություն իրականացնելու համար նշված անձանցից իրականացնում են նմուշառում՝ վճարովի հիմունքներով:

Սույն կանոնից բացառություն է արվում բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և ուղեկցողի համար, ովքեր Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ տասը օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) թեստի պատասխանը:

Պարտադիր ՊՇՌ թեստավորում անցնելու կանոնից բացառություն է արվում ԱՀ պաշտպանության բանակի կարիքներից ելնելով՝ զինված ուժերի անձնակազմի համար:

Սույն կետով սահմանված կարգավորումից բացառություն կարող է արվել միայն Պարետի ցուցումով՝ բացառիկ դեպքերում:».

2) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն որոշման 3-րդ կետով նախատեսված անձինք (բացառությամբ մինչև վեց տարեկան երեխաների) Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս անցակետում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ երեք օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (այսուհետ՝ ՊՇՌ) թեստի պատասխանը:

Սույն կանոնից բացառություն է արվում բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և ուղեկցողի համար, ովքեր Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ տասը օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) թեստի պատասխանը:

Պարտադիր ՊՇՌ թեստավորում անցնելու կանոնից բացառություն է արվում գյուղատնտեսական կամ այգեգործական աշխատանքներ իրականացնող անձանց,

հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակցելու նպատակով՝ հանգուցյալի մերձավոր ազգականների (սույն որոշման իմաստով մերձավոր ազգական են համարվում հանգուցյալի ծնողները, ամուսինը, կինը, երեխաները, քույրը և եղբայրը), ԱՀ պաշտպանության բանակի կարիքներից ելնելով՝ զինված ուժերի անձնակազմի համար:

Սույն կետով սահմանված կարգավորումից բացառություն կարող է արվել միայն Պարետի ցուցումով՝ բացառիկ դեպքերում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի օգոստոսի 31-ին՝ ժամը 00:01-ին:

Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ